

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՊԵՍՊԱՆՆԵՐԸ

Posted on July 27, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Կասիա Թոփուշեան, Պէյրուզ, 26 Յուլիս 2011

«Գեղարդ»ի խմբագրութիւնը ուրախութեամբ կը ծանուցանէ Պէյրուզաբնակ Կասիա Թոփուշեանի տրամադրութիւնը մասնակցելու կայքէջի աշխատանքներուն: Կասիան Սփիւռքի մեր հազուագիւտ երիտասարդ լրագրողուհիներէն է: Ան կը թղթակցի Լիբանանահայ մամուլի զանազան հրատարակութիւններուն, միաժամանակ կ'աշխատակցի «Ռատիօ Սեւան»ին՝ յայտագիրներ համադրելով, ինչպէս նաեւ կը պատրաստէ հայկական եւ լիբանանեան մշակութային լուրերը:

Կասիա Թոփուշեան, Պէյրուզ, 26 Յուլիս 2011

«Գեղարդ»ի խմբագրութիւնը ուրախութեամբ կը ծանուցանէ Պէյրուզաբնակ Կասիա Թոփուշեանի տրամադրութիւնը մասնակցելու կայքէջի աշխատանքներուն: Կասիան Սփիւռքի մեր հազուագիւտ երիտասարդ լրագրողուհիներէն է: Ան կը թղթակցի Լիբանանահայ մամուլի զանազան հրատարակութիւններուն, միաժամանակ կ'աշխատակցի «Ռատիօ Սեւան»ին՝ յայտագիրներ համադրելով, ինչպէս նաեւ կը պատրաստէ հայկական եւ լիբանանեան մշակութային լուրերը:

Այս առիթով «Գեղարդ» կը փափաքի կիսել իր ընթերցողներուն հետ այն համոզումը որ նոր սերունդի ներկայացուցիչներուն համար անհրաժեշտ է անկաշառ եւ առանց քաղաքական նկատառումներու ստեղծել բոլոր միջոցները իրենց խօսքը լսելի դարցնելու: Անառարկելի է այն փաստը որ այդ ճանապարհով կարելի է նոր սերունդը ընդգրկել համազգային աշխատանքներուն մէջ: Ան այդ այս կայքէջի հնարաւորութիւնները տրամադրութեան տակ են այն երիտասարդներուն որոնք կը փափաքին արտայայտուիլ:

Բարեգալուստ Կասիա Թոփուշեանին: **Խմբ.**

Քանի մը շաբաթներ առաջ Սփիւռքի նախարարութիւնը Երեւանի Պետական համալսարանի հետ գործակցաբար կազմակերպած էր «Սփիւռքի ՉԼՄ\*-ի երիտասարդ լրագրողներու դպրոց»ը: Մասնկացութեան նպատակով, Հայաստան ժամանեցին 18 սփիւռքահայ լրագրողներ:



Այս խումբին մէջ կային սկսնակ, փորձառու, հաստատութիւններու մէջ աշխատող եւ ազատ լրագրողներ, որոնց բոլորին նպատակը մէկ էր «խօսքը փոխանցել հանրութեան ամէնէն յարմարագոյն եւ ճշգրիտ ձեւով»: Իսկ այդ «խօսքը» ինչպէ՞ս փոխանցելը, իւրաքանչիւր լրագրողի գաղտնիքն էր: Աշխարհի չորս կողմերէն ժամանած այս լրագրողները միախմբուեցան մէկ յարկի տակ.

անոնք բոլորն ալ ունեին մէկ անուն ` «սփիւռք», մէկ գործունեութիւն ` «լրատուութիւն», եւ մէկ ցաւ ` «հայրենիքի կարօտ»:

Այս երիտասարդ լրագրողներու միակ հասարակ յայտարարը իրենց լրագրող եւ հայ ըլլալն էր, մնացեալ մանրամասնութիւններն ու տարբերութիւնները անիմաստ եւ անկարելորդ կը դառնային, երբ անոնք համախմբուած էին մայր հողին վրայ:

Հարկ է նշել որ գոյութիւն ունեցող տարբերութիւնները կապ ունեին իրենց ապրած եւ աշխատած երկիրներուն եւ պետութիւններուն պայմաններուն բերումով : Հետաքրքրական էր սակայն որ այդ տարբերութիւնները աւելի կը մտերմացնէին մէկ լրագրողը միւսին:

Երկու շաբթուան այս առօրեայ դասընթացքները, որ կազմակերպուած էին Երեւանի Պետական համալսարանի Ժուռնալիստիքայի Ֆակուլտետի կողմէ, կը պարփակէին օգտաշատ, կարելորդ դասապահեր եւ դասախօսութիւններ, որոնք կը փոխանցուէին Սփիւռքէն եւ Հայաստանէն մասնագետներու եւ խմբագիրներու կողմէ:

Այս 18 լրագրողները, ներառեալ ես, լսեցինք եւ իմացանք Հայաստանեան եւ Սփիւռքեան տարբեր բնագաւառներու մամլոյ այլազան մարտահրաւերները եւ հարցերը: Կարողացանք ըմբռնել եւ հասկնալ հայ լրագրողին յուզող հարցերը, որոնցմէ մէկը լեզուական դժուարութիւններն էին :



Դասընթացքներուն ընթացքին նաեւ տեղի ունեցան բանավեճեր եւ մեկնաբանութիւններ, որոնք ընթացան բաւական առողջ միջավայրի մէջ, իսկ «խօսքը» օգնեց այս բոլորին:

Շատեր այս «խօսքը» փոխանցեցին հարցազրոյցներու միջոցաւ, ուրիշներ յօդուածներով, կամ ռատիոյի եւ հեռատեսիլի հաղորդումներով: Իսկ տակաւին ուրիշներ` արուեստի միջոցաւ:

Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ եւ Երեւանի Պետական համալսարանի գործակցութեամբ կազմակերպուած այս ծրագիրը, ունէր որոշ թերութիւններ, թէ՛ կազմակերպչական եւ թէ՛ դասընթացքներու ակարտական ծրագրի յաջող ընթացքի առումով. սակայն անոնք հասկնալի էին իբրեւ նման ծրագրի մը առաջին քայլը:

Ողջունելի էր ծրագրի գաղափարը, մտայնացումը, եւ անոր գործադրութիւնը. իր ամբողջութեամբ ծրագիրը յաջողութիւն մըն էր, իսկ ամենէն կարելորդ ` լրագրողները միախմբելը ինքնին յաղթանակ մը:

Եւ ինչպէս որ կեանքի մէջ ամեն ինչ վերջ մը ունի, Սփիւռքահայ լրագրողներու առաջին դարոցն ալ իր դմները փակեց իւրաքանչիւր լրագրողի ակարտական աշխատանքով,

որը Սուրիոյ, Վրաստանի, Աբխազիոյ, Լոնտոնի, Հնդկաստանի, Հոլանտայի, Ջալախքի, Ռուսիոյ, Լիբանանի, Եսթոնիոյ, Իրանի, Եւ Եգիպտոսի 18 լրագրողներուն ապահովեց «Հայաստանի Երիտասարդ Դեպարտմենտ»ի կոչում:

**\*Չանգուածային լրատուամիջոցներ**

